Ի-ինգերորդ տարի № 30 10 Օգոստոսի 1886

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ԿԻՒՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Տարեկան բաժանորդագինն է հինգ րուբլի: Բաժանորդագրութիւնն ընդունվում է «ԱՐՁԱԳԱՆՔԻ» խմբագրատանը և կենտրոնական գրավաճառանոցում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ. Редакція „Арцаганкъ“.

Առանձին համարները 10 կ. Յայտարարութիւնների բառն 2 կ.

«ԱՐՁԱԳԱՆՔ»-ԻՆ

կարելի է ստորագրուել 6 ամսով, յուլիսի 1-ից մինչև յունվարի 1-ը 1887 թ. 6 ամսուայ բաժանորդագինն է 3 րուբլի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հրահանգ և ծրագիր ուսման Հայ լեզուի վաոն եկեղեցական—Ծխական միգասեան և երկդասեան ուսումնարանաց Հայոց:—ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ:—ՖԵԼԻԼԵՏՕՆ: Ղարիբ մշեցին:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հրահանգ եւ ծրագիր ուսման Հայ լեզուի վաոն Եկեղեցական—Ծխական միգասեան եւ երկդասեան ուսումնարանաց Հայոց:

Սկիզբն ուսման մայրենի լեզուի յառաջնում ամի լինի բերանացի վարժութեամբք, որոց նպատակ է նախապատրաստել զնորեկ մանկունս ի համակարգեալ ուսումն գրագիտութեան: Վարժութիւնքդ այդոքիկ լինին դիւրընտել զրուցատրութեամբք ուսուցչին ընդ մանկունս: Նիւթք զրուցատրութեանցն կարեն լինել այլ և այլ առարկայք զննելիք, առակք, մանրավէպք, առածք և նմանք սոցին, որք ամենայնիւ դիւրահասք լիցին մանկանց՝ ըստ լեզուին և ըստ բովանդակութեան: Փոյթ լիցի ուսուցչին, զի ի վարժութիւնս աշակերտք ոք յորժամ խօսիցի, կամ պատմիցէ և կամ նկարագրիցէ զառարկայ ինչ՝ արտասանութիւն նորա լիցի պարզ և լիահնչիւն, ձև արտայայտութեանն՝ կանոնաւոր, իմաստքն մեկինք և գիտակցականք և նկարագրութիւն զննելի առարկային կատարեալ՝ ըստ չափու կարողութեանն: Բերանացի նախակրթանքն այսոքիկ, յոյժ կարևորք վասն արդիւնաւէտ ընթացից ուսուցման լեզուի, կարեն տևել ի սկզբան անդ տարւոյն եօթնեակս երկուս կամ երիս:

Յետ այսորիկ ուսուցիչն մատիցէ յուսուցումն գրագիտութեան հնչական եղանակաւ, ծանօթս տալով մանկանց նախ զեռւթենէ մարդկային խօսից հատուածով իրիք ի նիւթոց անտի անցեալ զրուցատրութեանց. ապա վերլուծեսցէ զհատուածն գայն ի նախադասութիւնս, և զնախադասութիւնսն վերլուծեսցէ ի բառս, զորս ապա ի վանկս, և զայսոսիկ ի տառս: Յորժամ աշակերտք այսու բնական և դիւրիմանալի եղանակաւ գիտասցեն զնշանակութիւն տառիցն ի խօսս և զկիրառութիւն նոցին, ապա պարտ է անդրադարձաբար բաղադրականաբ զուգապատշաճ տառից կազմել զվանկս, զբառս և զնախադասութիւնս, ձևակերպելով միանգամայն ի գիր զամենայն, զոր ուսցին մանկունք: Ցոյժ օգտակար լիցի, եթէ աշակերտք, յորչափ ինչ ինչ հնար իցէ, ինքնին կատարեսցեն զվերտողեալ կրթութիւնսն, իսկ ուսուցիչն առաջնորդեսցէ միայն նոցա, և ի տկարանալ և եթ նոցին՝ ցուցցէ զդիւրին և զկարգաւոր եղանակն:

Զկնի նախապատրաստութեանցս պարտ է տալ ապա ի ձեռս աշակերտաց գյարմարաւոր դասագիրս ընթերցանութեան:

Ի ժամ ընթերցանութեան հարկ անհրաժեշտ է ուսուցչին ուշադիր լինել, զի աշակերտք ընթերցցին մտաւութեամբ, ճշգրիտ և պարզ առոգանութեամբ և անսայթաք վերծանութեամբ: Առ այս կարևոր է, զի ուսուցիչն ինքնին յառաջագոյն միանգամ և երկիցս ընթերցցի զդասն ի լուր աշակերտաց, ապա տացէ նոցա կրկնել զնոյն ի ներկայութեան իւրում, ուղղելով զթերութիւնսն և հուսկ յետոյ տացէ գայն դաս ի սերտումն ըստ առանձեալ կարգին: Ընդ ամին փոյթ կալցի ուսուցիչն՝ տալ յընթերցումն աշակերտաց միշտ գրուածս

դիւրահաս և համապատասխանս չափու զարգացման նոցա՝ ըստ լեզուին և ըստ իմաստիցն։ Սոյնպէս միտ դիցէ, զի վերծանութիւն աշակերտաց լիցի բնական ձայնիւ և պատշաճաւոր տրոհութեամբք բանից, որպէս խօսին մարդիկ ի հասարակի ընդ միմեանս, քանզի ոչ այլ ինչ է գիրն, եթէ ոչ պատկեր մարդկային խօսից։ Մեծապէս վնասակար է, յորժամ թոյլատրեն մանկանց ընթեռնուլ եղանակաւոր իմն կերպիւ, իբրև թէ յեկեղեցւոջ և անտեղի ձայնարկութեամբք։

Եւ զուղղագրութենէ լեզուին պարտի հոգ տանել ուսուցիչն։ Ո՛չ եթէ յետաձգել պիտոյ իցէ զկրթութիւն ի կանոնս ուղղագրութեան ցուսումն քերականութեան, յորժամ մանլամանօրէն և համակարգութեամբ աւանդելի են կանոնքն այնոքիկ, այլ անդստին ի սկզբանէ գրավարժութեանն՝ հարկ է կրթել զմանկունս նաև յուղղագրութեան։ Առ այս բազում նպաստէ հնչական եղանակ դասաւանդութեանն, քանզի անդէն իսկ ի վերլուծելն և ի բաղադրելն զբառս, յորժամ զուտ հնչումն և եթ տառին լսի՝ առանց աւելորդ ձայնից, լսելիք ուսանելեաց ընտելանան ճշգրիտ արտասանութեան, ապա ուրեմն և ձևակերպութեան մէն մի գրոյ։ Հուսկ ուրեմն ի վարժութիւն ուղղագրական կանոնաց պիտեսցի և յաճախակի արտագրութիւն ընտրեալ և նշանակեալ հատուածոց՝ ճշդիւ և մտագրութեամբ, և ապա գրութիւն ի լրոյ պարզ թելադրութեամբ ուսուցչին, և միւս ևս կազմելն խմբից ուղղագրելի բառից։ Այս ամենայն գործնական վարժութիւնք դիւրաւ տպաւորեն ի յիշողութեան մանկանց զզլխաւորս յուղղագրական կանոնաց, չև ևս մխեալ ի տեսութիւնս քերականականս, զորս առ յապայն ունին նոքա ուսանել։ Զամենայն վրիպակս աշակերտին անհրաժեշտ է ուղղել խնամով, զի մի տպաւորեսցին այնոքիկ ի միտս նորա և շփոթեսցեն զնա։ Յոյժ օգտակար իցէ, յորժամ ուսուցիչն կանխապէս ընտրիցէ և կազմիցէ հատուածս յարմարինս վասն նախորոշեալ ուղղագրական գիտելեաց և հոգ տարեալ կանխաւ, զի մի պարունակեսցէ յինքեան հատուածն այն բազմաթիւ գիրս վրիպելիս, քանզի բազում և յաճախական սխալմունք զհետ կարեն բերել ոգւոյ աշակերտին զլքումն և գլուսահատութիւն։

Ի խոյս հետևանացս իսկ այսոցունց վերջնոց պարտ է ուսուցչին ի մտի ունել-ոչ երբեք ծանրաբեռնել զմանկունս աշխատութեամբք, առաւել քան զկար նոցին և անդր քան զչափ զարգացմանն, և դաս նոր՝ յայն դէպս միայն նշանակեսցի, յորժամ ստուգիւ իւրացուցեալ իցէ աշակերտաց զաւանդեալն յառաջնմէ։

Յետ համառօտագոյն ցուցմանցս զուսուցմանէ մայրենի լեզուիս՝ մնացեալ ամենայն թողեալ լինի հմտութեան և աշխատասիրութեան բանիմաց ուսուցչին։ Կարգեսցուք այժմ զնիւթս և զսահմանս ուսման լեզուիս ըստ ամս և ըստ դասարանս։

Ա. Գասպար.

Ա. ՏԱՐԻ։

Նախապատրաստութիւն բերանացի վաժութեամբք։ Գրութիւն և ընթերցումն բառից, նախադասութեանց և կարճառօտ յօդուածոց։ Ճիշտ արտասանութիւն և կիրառութիւն երկբարբառ տառից։ Ձանաչումն ձայնաւոր և բաղաձայն տառից։ Պարզ առոգանութիւն և կանոնաւոր տրոհումն բառից և նախադասութեան՝ յընթեռնուլն։ Ձանաչումն նշանաց առոգանութեան և տրոհման։ Կիրառութիւն գլխագրոց ի յատուկ անուանս և ի սկիզբն պարբերութեանց։ Կիրառութիւն նշանաց առոգանութեան։ Փոքրիկ և դիւրին ոտանաւորք բերանացի։ Արտագրութիւն բառից և նախադասութեանց։

Բ. ՏԱՐԻ։

Կանոնաւոր ընթերցումն յաշխարհիկ լեզու նշանակեալ յօդուածոց՝ բացատրութեամբք հանդերձ։ Համառօտութիւն պարունակութեան յօդուածոցդ՝ բանաւոր և մերթ գրաւոր։ Պատասխանագրութիւն առ հակիրճ և պարզ հարցմունս ուսուցչին, տուեալս առ ի վարժել զաշակերտս ի գրաւոր արտայայտութիւն մտաց՝ կանոնաւոր շարադասութեամբ բառից։ Մաքուր և ճիշտ ընդօրինակումն ընտրեալ հատուածոց։ Որոշումն բառից, թէ որք յայնցանէ են անուանք առարկայից, որք են անուանք որպիսութեանց առարկայից և որք ցուցանեն զգործողութիւնս նոցունց. այսինքն է՝ ճանաչել զանուն գոյական, ածական և զբայ՝ առանց քերականական անուանակոչութեանց։ Որոշումն թուոյ անուանց։ Կիրառութիւն — և չ գրոց։ Ուղղագրութիւն բառից յանգելոց յածական, ու-ած, ուղ, ու և էս մասնկունս։ Կիրառութիւն յ գրոյն ի վերջ բառից և ի մէջն։ Որոշումն հրամայական, կոչական և բացագանչական բառից։ Կազմութիւն պարզ և բարդ բառից։ Յարմարաւոր ոտանաւորք՝ բերանացի։

Գ. ՏԱՐԻ

Շարունակութիւն կրթութեանց յանսայթաք և ի կանոնաւոր ընթերցմունս և ի գրութեան նշանակեալ նիւթոց յաշխարհաբառ լեզու։ Գրութիւն թելադրութեամբ ուսուցչի՝ ըստ կարելւոյն անսխալ։ Ուղղագրութիւն բառից յանգելոց ի մասնիկս — ուր, ուղ, այր, յին, էն, ու-ի, այի, ըն, եակ, այ, նոյ, ակ, էտ, ու-ըտ, և այլն։ Կազմութիւն պարզ, բարդ, ածանցեալ և բաղադրեալ բառից։ Որոշումն յատուկ, հաւաքական և հասարակ անուանց։ Որոշումն մասանց բանի, տալով նոցա գքերականական անուանս։ Որոշումն նախադասութեանց և գլխաւոր մասանց նոցին։ Կիրառութիւն նշանաց տրոհման։ Կրթութիւնք ի հոլովմունս և ի խոնարհմունս առանց քերականական խիստ համակարգութեան։ Բերանացի ոտանաւորք։

Բ. ՊՈՍՊՈՐԱՆ.

Դ. ՏԱՐԻ։

Ընթերցումն այլ և այլ քաղուածոց ի մատենագրաց և առաւելապէս յԵղիշեայ և ի Փարպեցւոյ՝ յաշխարհիկ լեզուս Գրաբառ հատուածք ի Ս. Գրոց և յազգային մատենագրաց և գլխաւորապէս ի յիշատակելոց անտի՝ յերկուց հեղինակացն։ Համակարգեալ քերականութիւն աշխարհաբառ լեզուի։ Անսխալ և կանոնաւոր արտայայտութիւն մտաց՝ գրով և ի բերանոյ՝ աշխարհաբառ լեզուաւ և թարգմանութիւն դիւրին հատուածոց ի գրաբառէ յաշխարհաբառ, բաղդատելով ի պատշաճաւոր դէպս զտարբերութիւնս երկոցունց՝ ի վերջաւորութիւնս հոլովից, թուոց, ժամանակաց բայից և ի դասաւորութեան բառից։ Գրաւոր աշխատութիւնք ըստ առաջնոյն, այլ միայն առաւելագոյն ընդարձակութեամբ և բաղադրութեամբ նիւթոցն և բովանդակութեանց։ Վարժութիւնք ի նամակագրութիւնս և յայլ տեսակս հանապազօրեայ գրագրութեանց։ Զափածոյ բանաստեղծութիւնք յաշխարհիկ լեզուս և ի գրոցն։

Ե. ՏԱՐԻ

Ընթերցանութիւն և գրաւոր աշխատութիւն ըստ նախընթացին, յաւելլով յաւէտ զլրացուցիչ կրթութիւնս՝ առ ի քաջավարժս առնելոյ զմանկունս ի կատարեալ ընթերցանութեան և ի գրութեան։ Թարգմանութիւն դիւրին բանից յաշխարհաբառէ ի գրաբառն։ Ստուգաբանական մասն քերականութեան գրոց լեզուի և լրացումն թերութեանց քերականութեան աշխարհաբառ բառին՝ բաղդատութեամբ օրինաց փոփոխման երկոցունցն՝ ըստ չափու հասկացողութեան աշակերտելոց։ Վերլուծութիւն նախադասութեանց ի գրոց լեզուս։ Ընտիր բանաստեղծութիւնք ի բերան։

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

5 օգոստոս 1886 Թ.

Նախորդ նամակներով մանրամասն նկարագրած եմ արդէն Վանայ խռովութիւնն։ Այդ դէպքն այժմ մեր ազգային գործերու շարքին մէջ ամենէն ծանրակշիռն և կարևորը պէտք է համարել, որովհետև Էզրումի ապստամբութեան յայտնի խնդրէն յետոյ ուրիշ ոչ մի խնդիր այնչափ վնասակար և աղետաբեր եղած չէ Հայոց, որչափ Վանայ ոչն խընդիրն։ Եւ ցաւալի կէտն այն է, որ այդ պարագայի մէջ Թէ Թուրքիոյ Հայոց կրօնական իշխանութիւնն և Թէ քաղաքական իշխանութիւնն խաղացին և տակաւին կը խաղան այնպիսի դեր մը, որ շատ տխուր գաղափար կազմել կուտայ ամեն մարդու մեր ազգի այդ երկու վարիչ մարմնոց գործունէութեան վրայ։

Խնդրի ծանրութիւնն պատճառաւ աւելորդ է կրկին անգամ չեշտակել աստ Պատրիարքը կատարելապէս տեղեակ լինելով գործի մանրամասնութեան դարձեալ կ'ուզեմ արդար ցուցնել զայն հրապարակի վրայ։

Պատրիարքն և Նուբեան տեղեակ լինելով այս ամեն Ճշմարտութեան, դարձեալ հեռագիր կը զարնեն քննիչ Օրմանեան եպիսկոպոսին, որ իւր քննութեան մէջ Պողոս եպիսկոպոսին արդարացնէ, իսկ Ժողովրդեան յանցապարտ ցուցնէ։ Այս պարագայէն կարելի չէ հասկնալ Պատրիարքի և Նուբեանի Թագուն նպատակն խնդրի նկատմամբ։ Նոքա իրը ազգի գլխաւորներ պէտք է որ քննեն և դատեն Ճշմարտութեամբ, այլ երբ նոքա բոլորովին հակառակը կը գործեն՝ կը նշանակէ Թէ պարզապէս կամ կաշառուած են Պողոս եպիսկոպոսէն կամ վատ նպատակ մ'ունին, այլապէս անկարելի է ըմբռնել։ Սակայն բարեբաղդաբար Օրմանեան այնքան աղնիւ կը գտնուի, որ, հակառակ յիշեալ հեռագիրներուն անաչառութեամբ կը քննէ գործն և կը տեղեկագրէ ի Կ. Պոլիս գործի ամեն պարագայներն և Պողոս եպիսկոպոսի անիրաւ գործունէութիւնն։ Պատրիարքարանը Ճարահատեալ կը պարտաւորի հրաժարացնել Պողոս եպիսկոպոսն, այնուամենայնիւ դարձեալ կը ջանայ արդարացնել զայն։ Խնդրի ամենատխուր կէտն, զոր մինչև այժմ չը յիշեցի, այն է, որ Պողոս եպիսկոպոս քուէարկութեան օրուան խռովութեան իրը պարագլուխ և իրը տէրութեան հակառակ տեղեկացուած իշխանութեան կը մատնէ 100 հոգի, որոնցմէ վաթսունն հոգին ամիս է մը կը փթին բանտի մէջ և ով գիտէ ՛երբ պիտի գտնեն իրենց ազատութիւնն։ Ուրիշ բազմաթիւ Վանի նշանաւոր հայերն փախած են Պարսկաստան և այլ կողմեր քանտարկուելու երկիւղէն, իսկ ոմանք ևս աքսորուած են։ Ինչպէս կը յիշեն Ա ր ձ ա գ ա ն ք ի ընթերցողք մի քանի ամիս առաջ նորին այդ Պողոս եպիսկոպոսի մատնութեամբ տասնի մօտ Վանայ առաջնակարգ հայերէն աքսորուեցան Պոլիս և Թամասկոսի կողմերն։ Հանգամանքներէն գատելով, Պատրիարքն և Նուբեան հոգ չը պիտի տանեն քանտարկելոց ազատութեան համար, մանաւանդ որ այդ քանտարկեալներն Վանայ հասարակութեան այն մեւնոյն մասն կը կազմեն, որ վեհապետանի պատրիարքացման դեմ բողոքեցին յայտնելով նորա անարժանաւորութիւնը Պատրիարքական աթոռի համար։

Իրը Վանայ առաջնորդական փոխանորդ Վան պիտի երթար Պատրիարքական փոխանորդ Գ. վ. Ռուսճուկլեան, սակայն մեկնման յապաղումն կարծել կուտայ որ Վանեցիք ուրիշ եկեղեցական մը կ'ուզեն։ Գործն այս վիճակի մէջ է առ այժմ. յուսանք որ Պատրիարքարանը, յարգելով իւր պարտաճանաչութիւնը, նորա համեմատ գործը պիտի կարգադրէ։

* * *

Մի քանի ամիս առաջ Խրիմեան Հայրիկ Մեծ Եպարքոսէն խնդրած էը որ արտօնութիւն տրուի իրեն Վան երթալու. սակայն Բ. Դուռն մերժեց տալ Խրիմեանին արտօնութիւն։ Ուստի նա պարտաւորեալ է մնալ այստեղ մնալ և սորա մեկ ապացոյցն ալ այն է որ նա կրօնական ժողովոյ առնապետ ընտրուեցաւ երեք տարիով։ Այս մասին գրուեցաւ արդէն։ Խրիմեան շատ լաւ տեղեակ լինելով Հայաստանի եկեղեցական հանգամանքներուն, իւր արդի պաշտօնավարութեան մէջ կարևոր ծառայութիւն կրնայ մատուցանել հայ հոգևորականութեան մինչև հարկ եղած բարեկարգումները մտցնելով։ Եւ արդէն այժմ մի քանի կարևոր գործեր տեսաւ։

—Հայաստանի մէջ Ճնշման հետ կը բազմանայ և

հարստահարութիւնն ու գողութիւնը: Մի շաբաթ առաջ փոքր Ասիոյ մէջ բազմաթիւ հայեր բոլորովին կողոպտուած են քիւրդերի ձեռքով:

Վաղինակ:

ՖԷԼԻԷՏՕՆ

ՂԱՐԻԲ ՄՇԵՑԻՆ

Ա.

Մի պատանի, հեռու տրտմութեց, մեայնակ կանգնած էր Բախչէ—Ղափուսի կոչուած նաւահանգստի մօտ և ապշած կերպով նայում էր իւր շուրջը: Պատանին դեռ նոր էր դուրս եկել մակոյկից, որ, հանելով նրան յամաքի վրայ, կրկին շտապով վերադարձաւ դէպի Բօսֆորի մէջ խարխափ չոգենաւը, դարձեալ նոր մարդիկ և նոր մթերք կրելու դէպի յամաքը:

Նա կանգնած էր լուռ մտատանջութեան մէջ և անհամբեր կերպով նայում էր այս կողմ և այն կողմ: Երևի, նրան չէր գրաւում և լայնատարած Ստամբօլի բարձր մինարէթները իրանց փայլուն կիսալուսիններով:—Նրան զբաղեցնում էր մի միտք միայն՝ „հիմա ուր գնամ“ . . .

Դուրս գալով հայրենական տնակից, նա գիտէր, թէ ուր է գնում, իսկ այժմ, հասնելով բազմացած քաղաքի դռներին, չէր իմանում, թէ ուր գնայ:

Պատանին հազիւ կը լինէր տասնեօթն, կամ տասնութն տարեկան: Արևից այրուած դէմքը՝ իւր խաչոր, կանոնաւոր գծերով, կրակոտ աչքերը, գլխի երկար մազերը, որ նախշուն արաքչինի տակից սև հոսանքով թափուել էին ուսերի վրայ,—այդ բոլորը ներկայացնում էր վայրենի գեղեցկութեան այն կախարդիչ տիպարը, որ կարելի է տեսնել լեռնականների մէջ միայն: Բարձրահասակ էր նա և թիկնեաւէտ: Փոքր ինչ ցամաք, ջղային կազմուածքը արտայայտում էր հարուստ մարմնական զօրութիւն: Նա վատ չէր հագնուած: Երևում էր, որ նրա մայրը իւր բոլոր ունեցածը սպառել էր, որպուն, որքան կարելի է, վայելուչ կերպով Ճանապարհ դնելու բախտի և առատութեան այն մայրաքաղաքը, որ տեղից խեղճ կենը և՛ իւր բախտաւորութիւնն էր սպասում...

Աչքը մայը մտնելու մօտ էր: Պատանին դեռ, մի անշարժ արձանի նման, կանգնած էր: Նրա ոտների մօտ, ետևի վրայ, դրած էր Ճանապարհորդական պարկը:

Շոգենաւից դուրս եկած բազմութիւնը հետզհետէ նօսրանում էր: Ոմանց քշում էին դէպի մաքսատուն, ոմանք, իրանց Ճանապարհի պայուսակը ձեռքում բռնած, շտապում էին դէպի քաղաքը, իսկ շատերը դեռ նստած էին իրանց իրեղէնների մօտ, սպասում էին ընկերներին կամ բեռնակրների:

Այդ մէջոցին մաքսատան համալներից մէկը մօտեցաւ պատանուն, Թուրքերէն լեզուով հարցրեց.

—Ունե՞ս մի բան տանել տալու:

Նրա հարցմունքը մի կատարեալ ծաղր էր դէպի պատանին, որ բացի Ճանապարհորդական փոքրիկ պարկից, ուրիշ բան չունէր: Նա ոչինչ չը պատասխանեց:

Համալը, նրբ վրդովուած աչքով ոտքից գլուխ չափեց պատանուն, կարծես, ինքն ևս վրդմանեց իւր արած հարցմունքից, և շտապեց հեռանալ, բայց պատանին կանգնացրեց նրան, ասելով.

—Ի սէր Աստուծոյ. ցոյց տուր ինձ, ո՞ր կողմումն են կենում այդ քաղաքի մշակ մարդիկը:

—Մշակ մարդիկը՞,—կրկնեց ծերունի Համալը, սուր հերպով նայելով պատանու երեսին, —մշակ մարդիկը, որդի, քաղաքի ամեն կողմում կենում են: Ո՞ր տեղից ես:

—Մշեցի:

—Հասկացայ... Եկել ես վարձ վաստակելու... Անունդ ի՞նչ է:

—Օհան:

—Մշու սուլթան սուրբ Օհանիսը քեզ պահապան, —բացականչեց Համալը և մի առանձին կարօտով գրկեց իւր հայրենակցին:

Բարեսիրտ ծերունին այլ ևս երկար հարցուփորձի պէտք չունէր: Բաւական էր, որ իմացաւ, թէ պատանին հայ է և մշեցի, իսկ մնացածը՝ նա արդէն կարող էր հասկանալ . . . Նա գիտէր, թէ մշեցին ինչ նպատակով է թողնում հայրենի երկիրը, գիտէր, թէ ինչու է դուրս գալիս դէպի պանդխտութիւն և Ստամբօլի խառնաշփոթ աղմուկի մէջ ինչ է որոնում . . . Այդ բոլորը գիտէր նա . . . , օրովհետև ինքն ևս մշեցի էր, ինքն ևս նոյն Ճակատագրական դառն պահանջների պատճառով թողել էր հայրենիքը . . .

—Քեզ էլ մատաղ, քո երկրին էլ,—ասաց ծերունին, աչքերը սրբելով:—Ե՛կ ինձ հետ, որդի, Ստամբօլը այնքան մեծ է, որ դու կարող ես կորչել այնտեղ: Ես ինձ հետ, քեզ կը տանեմ մաքսատան համալների մօտ, կը մնաս մեր մէջ, մինչև քեզ համար մի գործ կը մտածենք . . .

Պատանին վերառեց իւր պարկը, և ուրախանալով հետևեց նրան:

Նրանք գիմեցին նաւահանգիստը, որտեղ հարիւրաւոր համալները գրասեների նման կրում էին շոգենաւի բերած մթերքները դէպի մաքսատունը: Ծերունին մօտեցաւ մի վաճառականի, որ, իւր իրեղէնների մօտ կանգնած, մշակի էր սպասում: Ինքը վարժ կերպով շալակեց մի ծանր արկղ և, մի թեթև արկղիկ ևս պատանուն տալով, ասաց.

—Այդ էլ դու վեր առ, թող մեջդ սովորի. . .

Բ.

Մօտաւորապէս մի տարի անցել էր այն օրից, որ Օհանը մտաւ Կ. Պոլիս:

Այժմ բաւական ծանօթացել էր նա այդ խառնաշփոթ քաղաքի ընդարձակ լաբիւրինթոսի հետ, գիտէր նրա նեղ փողոցները և, առանց մոլորուելու, կարող էր մի թաղից մեսը գնալ: Այդ մեծ յառաջադիմութիւն էր այն վիճակի մարդկանց համար, որին պատկանում էր Օհանը, և որոնք անպատճառ պէտք է ծանօթ լինէին քաղաքի հետ: Բեռնակիրը, համալը, պէտք է ծանօթ լինի մինչև անգամ տների հետ, որպէս զի, եթե նրան մի բան են յանձնում, նա կարողանայ անսխալ հասցնել նշանակած տեղը:

Նա այժմ անգործ չէր, իւր համար պարապմունք էր գտել:

Բախտը հէնց առաջին անգամից, երբ նա ոտք կոխեց Կ. Պոլսի չէմքի վրայ, նպաստեց նրան, հանդիպեցնելով մի

այնպիսի մարդու, որը առեց Նրան իւր Հոգաբարձութեան ներքոյ և նրա համար յատաջադիմութեան Ճանապարհ հարթեց: Այդ մարդը Ոսկանն էր, այն ծերունի համալը, որին գտաւ Նա նաւահանգստում: Ոսկանը հին համալ էր, Նա իւր մազերը Ճերմակացրել էր այդ գործի մէջ: Իւր հայրենակից համար մտածեց Նա մի այնպիսի պարապմունք, որ շատ յարմար էր թէ Նրա մանուկ հասակին և թէ անվարժ կազմուածքին: Օհանը չէր կարող մեծ ծանրութիւնները կրել, բայց թեթև բեռները տանել՝ կարող էր Նա:

Մի առաւօտ բարեսիրտ ծերունին իւր ձեռքով կապեց Օհանի մէջքին մի կթոց և, օրհնելով, Ճանապարհ դրեց:

—Հիմա գնա,—ասաց Նրան փորձուած մարդու վստահութեամբ,—դրանից չետոյ հացը քեզ պակաս չի լինի . . .

Այդ օրից շատ չէր անցել: Մխանգամ Ղալաթիայի փողոցներից մէկի մէջով՝ ծանր ու դանդաղ քայլերով գնում էր Օհանը: Նրա մէջքին կապած էր իւր անբաժան կթոցը, և իւր արհեստին յատուկ ձայնով եղանակում էր.

„Ձօփ չըկարայըմ. . .

„Ձօփ չըկարայըմ. . .

Այսինքն՝ „աղը կը դէն ածեմ, աղը կը դէն ածեմ“:

Նա այժմ „չօփչի“ էր. աղը դուրս ածող էր:

Այդպէս երկար գնում էր նա և տխուր, ձգական ձայնով եղանակում էր „չօփչինների“ սովորական երգը: Իւր կրակոտ աչքերը, որ այժմ քաւական նուազեցել էին, անդադար դարձնում էր նա դէպի փողոցի աջ և ձախ կողմերը, խորին անձկութեամբ սպասելով, գուցէ փակուած դռներից մէկը կը բացուէր և նրան կը կանչէին: Նա գնում էր և, մի և նոյն ժամանակ, հաւաքում էր գետնի վրայ ընկած փալասի կտորտանքները, չորի պատառները, և թագցնում էր իւր լայն ծոցերում:

—Է՛յ, չօփչի, էյ, չօփչի,—դռներից մէկը բացուեցաւ և լսելի եղաւ մի ձայն:

Օհանը ուրախութեամբ դիմեց դէպի կոչող ձայնը:

—Անիծուէ՛ մեր չօփչին, ամեն օր խմում է, հարփուում է, շաքաթներով երեսը չենք տեսնում. աղը ամբարուած մնում է:—Խօսողը մի չափահաս կին էր, որ ներս տարաւ Օհանին մի փոքրիկ բակ:

Այդ ոտքից ցգլուխ սև հագնուած կինը, կարծես, գերեզմանի մայր լինէր: Այնքան մեղմ էր նրա դէմքը, այնքան հեզութիւն կար նրա աչքերի մէջ, որ, թւում էր, թէ կուսաստանից հէնց նոր է դուրս եկել: Նրա կերպարանքի բարեպաշտական արտայայտութիւնը լրացնում էր՝ պարանոցին կապած՝ սև սաթի փոքրիկ խաչը, որի վերևի մասը երևում էր շապկի տակից: Նա մի առանձին ցաւակցութեամբ նայեց Օհանի վրայ և ինքն իրան ասաց. „Խեղճ տղայ, այդ հասակում, այդքան գեղեցիկ, և՝—չօփչի“ . . .

Օհանը լսեց այդ խօսքերը և գառնացած կերպով պատասխանեց.

—Ի՞նչ անեմ, տիկին, պարտքերի տակ խեղդուած մայրը, քոյրերը, եղբայրը ունեմ . . . ինձ ուղարկեցին, որ փարա վաստակեմ և նրանց անօրէնի ձեռքից ազատեմ . . .

—Ուրեմն նո՛ր ես եկել:

—Մի տարի հաղիւ կը լինի:

Տիկինը, հետաքրքրուելով Օհանի վիճակով, մանրամասնաբար հարցրեց նրա անունը, հայրենիքը, և թէ ո՛րտեղ է բնակվում այժմ, ու մօտ է լինում, և վերջը ասաց Նրան.

—Այսուհետև դու կը լինես մեր չօփչին, որդի, ես, քո խղճութեան համար, սովորական վարձից մի բան էլ աւել կը տամ քեզ: Երբեմն իմ ամուսնի հին հագուստներից ևս կը տամ, որ հագնես:

Օհանի ուրախութիւնը սահման չունէր. Նա շնորհակալութիւն յայտնեց և սկսեց աղը ածել կթոցի մէջ: Տիկինը չը հեռացաւ Օհանի մօտից, մի առանձին կարեկցութեամբ նայում էր, թէ ինչպէս Նա իւր շնորհալի ձեռքերով, որ աւելի մաքուր գործի արժան էին, վեր էր առնում ապականութիւնը և խնամքով ածում էր կթոցի մէջ: Երբ վերջացրեց, ուղղի նման չոքեց գետնի վրայ, մէջքը դէմ տուեց և, բռնելով կթոցի Թոկերից, քաշի նման վերբարձրացաւ:

—Ո՞րտեղ պէտք է տանես,—հարցրեց տիկինը:

—Ծովը,—պատասխանեց Օհանը:—Հիմա արգելուած է ուրիշ տեղ ածել:

—Այդ շատ հեռու կը լինի,—ասաց տիկինը, տալով Նրան մի ղուռուշ:

Օհանին զարմացրեց տիկնոջ առատաձեռնութիւնը: Նա մինչ իւր տարած աղը ծովն էր ածում, բայց Նրան երկու կամ երեք փարայից աւել չէին տալիս: Այժմ ստացաւ մի ամբողջ ղուռուշ, որ կանէ քսան փարա [1]):

Եթէ հմտութիւնը չը զսպէր Օհանին, Նա մեծ գոհունակութեամբ կը համբուրէր իւր բարերարուհու ձեռքը, մանաւանդ, երբ Նա մի ղուռուշը տալուց չետոյ, ասաց Օհանին.

—Այդ կը տանես, որդի, բայց երեկոյեան պահուն, երբ կը մթնի, դարձեալ կը գաս այստեղ, քեզ մի ուրիշ բան էլ կը տամ, որ տանես ծովը Նետես: Երկու ղուռուշ էլ Նրա համար կը ստանաս:

Երկու ղուռուշի անունը լսելիս, Օհանը մինչև անգամ մոռացաւ հարցնել, թէ ինչ բան պիտի լինէր այն, արդեօք ծանր էր, թեթև՞ էր, վերջապէս ինչ էր: Նա բաւականացաւ Նրանով միայն, որ այդ առաջին անգամն էր, որ նրան խոստանում էին մի այդպիսի հարուստ վճար:

—Տունը խո կը ճանաչե՞ս,—հարցրեց տիկինը:

—Աչքերս խփած կարող եմ գտնել,—պատասխանեց Օհանը:

—Շատ ապրես, դէ հիմա գնա:

Օհանը հեռացաւ:

Գ.

Օհանը գնում էր այժմ աւելի արագ քայլերով և մի առանձին հպարտութեամբ աչք էր ածում իւր շուրջը: Նրան այնպէս էր թւում, որ ամբողջ Ղալաթիայի բոլոր անցուդարձ անողները իւր վրայ են նայում և զարմանում են, թէ որքան մեծ կթոց ունի Օհանը և որպիսի ծանր բեռն է տանում:

Իւր արհեստի մէջ Օհանը ունէր իւր փոքրիկ վաստակութիւնը, թէև այդ ասպարէզում կանգնած էր դեռ շատ ստոր աստիճանի վրայ:

Իրանից զարձը տեսնում էր Նա համալներին, որոնք մի քանի հարիւր հօխանոց հակերը, մի թեթև տաշեղ նման, թռցնում, տանում էին: Տեսնում էր ջրկիրներին, հրդեհաշէջներին, որոնք . կրակների մէջ էին մտնում, և հրաշքները էին գործում: Բայց ի՞նքը . . . Ի՞նչ էր ինքը:—Դեռ „չօփչի“ էր, դեռ շատ պիտի գործէր, մինչև համալ դառնար: Եւ այդ էր, որ նրա մանկական սիրտը լցնում էր անսահման նախանձով, վառում էր նրա բոլոր եռանդը ան-

---

[1]) Մէկ ղուռուշը մօտաւորապէս 6 կոպէկ է:

զուսպ բաղձանքներով, թէ արդեօք երբ կը լինէր, որ հասնէր այդ բարձր փառքին։ Բայց մանկութիւնը սահման չունի. նա յոյսի անխոնջ թևերի վրայ դիմում է առաջ և դեպ առաջ . . .

Օհանի հորիզոնի վրայ, բացի համալից—քաջ և գօրեղ համալից—մի այլ եդեալ չը կար։ Զգտում էր նրան հասնել։

Կեանքից Օհանի պահանջմունքները շատ չափաւոր, շատ համեստ էին, այն պատճառով միայն, որ մի այլ գործունէութեան մասին գաղափար չունէր։ Նա իւր կթոցով գոլորովին բախտաւոր էր համարում իրան, և այդ էր պատճառը, որ նրա ծանրութիւնը չէր զգում,—և նրա ստորացնող և մարդկային աւելի վայելուչ ձգտումները մեռցնող նշանակութիւնը չէր հասկանում։

Ապականութեան և աղբի ներքոյ մկրքը ծռել,—այդ մի տաժանական աշխատանք է, որ վիճակվում է հայոց զաւակներին պանդխտութեան մէջ։

Օհանի մէջ կար եռանդ, կային ձգտումները, կային և հարուստ ընդունակութիւնները։ Ոչ միայն „վարա“ վաստակելու փափագը, այլ մի ներքին բնազդում մղում էր նրան մի մեծի, անորոշ նպատակի եռանդից, որի ինչ լինելը ինքն էլ չը գիտէր։ Ո՛վ գիտէ, եթէ ճակատագիրը նետէր նրան մի այլ աստղաբէզի վրայ, գուցէ նա աւելի յաջողութիւն կունենար, քան թէ այժմ իւր կթոցի ներքոյ։

Այժմ, գնալով Ղալաթիայի երկար փողոցի մէջով, Օհանը ուրիշ բանի վրայ չէր մտածում. նրա գլխում պտըտվում էին տիկնոջ խոստացած երկու ղուրուշները միայն։ „Երկու ղուրուշ . . . երևակայում էր նա,—քիչ փող չէ . . . Բայց ինչ պէտք է լինի այդ բարեսիրտ կնոջ ինձ յանձնելիք բանը . . . ինչու պէտք է գիշերով գցել ծովը . . . ինչ էլ որ լինի, իմ այդ շալակից ծանր չի լինի . . . Ճշմարիտ է, նա մի քանի փարա աւել տուեց, բայց քանի փարայից աւելի բեռ-նեց“ . . .

Փողոցի անցուդարձը, խուռն բազմութեան ընդհարումները սաստիկ էին։ Բայց Օհանը բախտաւոր էր, որ նրա կթոցին ոչ ոք չէր համարձակվում դիպչել, իրան չը կեղտոտելու համար։

Նա հասաւ ծովի ափը, երբ օրից բաւական անցել էր։

Այդ այն ամայի, անբնակ ափերից մէկն էր, որ ծառայում էր քաղաքի անմաքրութիւնների համար։ Մոյլ չափչինները, ձանձրանալով բերած աղբը ծովը նետել, այնպէս թափել էին երկի մօտ ու չոր դարձել։ Այսպէսով կազմուել էին ամեն տեսակ ապականութիւնների այն մեծ բլրակները, որոնց գարշահոտութիւնը մարդ էր խեղդում։ Բայց Օհանը ծոյլ չէր. նա բարձրացաւ կոյտերից մէկի վրայ և իւր կթոցի մերքերը խիստ վարպետութեամբ նետեց ծովի մէջ։ Ալիքները խլեցին նրան և մի քանի վայրկեանից չեզոց կրկին ժայթքեցին դէպի դուրս։

Գեղեցիկ Բօսֆորի այդ ափը ներկայացնում էր զանազան հակապատկերներով մի տխուր խառնակութիւն։ Այստեղ, մերձակայքում, նշմարվում էին ձկնորսների մի քանի խղճուկ տաղաւարները, իսկ այնտեղ, մի քանի քայլ հեռաւորութեան վրայ, բարձրանում էր այս կամ այն փաշայի ծովեզերեայ ապարանքը։ Այստեղ, աղբանոցի ընդարձակ տարածութեան վրայ, ամբողջ օրը թաւալվում էր քաղաքի ազատ շների ուրախ, անհոգ բազմութիւնը։ Փսփրում էին կոյտերը և, երբ մի կաշու կամ ոսկորի կտոր էին գտնում, սկսում էին մէմեանց բերնից խլել, կռիւ սարքել, մէմեանց կծոտել և շուտով՝ կրկին հաշտուել։ Իսկ այնտեղ, իւր „քեօշքի“ բարձրութեան մէջ, ուժից ընկած ծերունի փաշան, թիկն տուած թաւիշեայ բարձերին, բորբոքում էր իւր սառած ուղեղը թամբաքուկի ծխով, և գրգռում էր թուլացած ջղերը իւր մանկահասակ „խաթունների“ ամենաքնքուշ փայփայանքներով . . .

Աղբանոցի շները նայում էին չօփչիների վրայ, որպէս իրանց պարէնը հայթայթող ստրուկների վրայ։ Եւ ամեն անգամ, երբ մի թարմ կթոց էր բերվում, նրանք, ապիները շարժելով և մի առանձին հաճոյամոլութեամբ, կտրում էին չօփչիի առաջը։ Բայց մի քիչ անհաշտ էին Օհանի հետ, որովհետև նա իւր կթոցի մերքերը սովորաբար ծովն էր նետում։

Երկրի ընդհանուր սովորութիւնը ազդել էր և այդ անգործ, ձրիակեր անասունների վրայ։ Ստամբօլի քաղաքագրներից մտնելիս, անկարելի է, որ իւրաքանչիւրի կթոցը չը շօշափեն, եթէ հօտը առնեն, որ նրա միջում ուտելու բան կայ . . .

Թէև Օհանին վիճակուած էր չօփչի լինել քաղաքի մի այնպիսի թաղում, որտեղից ծովի ափը շատ հեռու չէր, այնուամենայնիւ, նա յոգնել էր, որովհետև սկսեալ առաւօտից, այդ տասներորդ կթոցն էր, որ ծովն էր նետում։ Մտածեց փոքր ինչ հանգստանալ։ Կթոցը ցած դրեց, նստեց աւազների վրայ, թիկն տուեց կթոցին։ Նա զգում էր և քաղցր։ Գրպանները խառնեց, գտաւ մի կտոր չոր հաց, սկսեց կծել։

Միջօրէի տօթային ժամն էր։ Քամի չը կար։ Օդը լցուած էր ջերմ գոլորշիներով, կարծես թէ, բաղանիքի օդ էր շնչում մարդ։ Երջակայքում տիրում էր խորին, գերեզմանական անդորրութիւն։ Թաղաղ էր և ծովը, որ այդ ժամուն մի առանձին ծուլութեամբ պարարվում էր իւր միջօրէական հանգստութեան մէջ։ Այնպէս էր թուում, որ նա էլ յոգնած էր։ Զանձրացած ալիքները դանդաղ կերպով զարկում էին Օհանի ոտներից ոչ այնքան հեռու, աւազների վրայ, և նրանց վհատած աղմուկը գողացնում էր օդի մեռելային լռութիւնը։ Ամեն ինչ տրամադրում էր դէպի թախծութիւն, դէպի հոգեկան ծանր թմրութիւն։

Կազդուրելով իւր քաղցը, Օհանը մտածում էր վերադառնալ։ Բայց խկոյն մտաբերեց տիկնոջ պատուէրը։ Նա ժամանակ էր նշանակել երեկոյեան, երբ արևը կը մտնէ և մուէզզէն կը պատէ։ Մինչև երեկոյ դեռ բաւական ժամանակ կար։ Բայց ինչու է պէտք վատնել այդ ժամանակը։ Կարելի էր վերադառնալ, գուցէ Աստուած կը յաջողէր, մի տեղից ևս նրա կթոցը կը լցնէին և մի քանի փարա կը ստանար։ Այսպէս էր մտածում Օհանը, բայց օրուայ ճնշող թմրութիւնը, կարծես, նրա վրայ ևս ազդել էր և տեղից շարժուել չէր կարողանում։ „Թող տօթը անցնի, մի փոքր ղովանայ, յետոյ կը գնամ“, վճռեց նա։

Սկսեց անխորհուրդ հերպով նայել դէպի Բօսֆորի գեղեցիկ մակերևոյթը և դէպի հեռաւոր տեսարանները։ Գործունէութիւնը դեռ ոչ բոլորովին դադարած էր։ Անխոնջ մակոյկները վազվզում էին դէպի զանազան կողմերը, տանելով մէկ թաղից դէպի մեւս թաղը անցուդարձ անողների բազմութիւնը։ Երբեմն սուլելով անցնում էր շոգենաւը, թողնելով իւր ետևից օդի մէջ իւր ծխային սև, երկար ժապաւէնը։ Տեղ-տեղ, փոքրիկ լաստերի վրայ, ձկնորսները սարքում էին իրանց ուռկանը։ Երբեմն զուարճասէրների մի ուրախ խումբ, գոյնզգոյն դրօշակներով զարդարած „դայըղի“ վրայ, լողում էին դէպի հեռաւոր կղզին։ Մէկը երգում էր, մեւսը ածում էր „թամբուրայի“ վրայ, մի քանիսը պար էին գալիս։—Այդ բոլոր զուարճալի պատկերները, անընդհատ բազմների նման, գալիս էին և անցնում էին Օհանի աչքերի առջևից։

Համանման շարժառիթները գարթեցնում են համա-

նման ղգացմունքներ։ Ցեռնելով ուրիշների ուրախութիւնը, Օհանի սրտում շարժուեցան Թագնուած վշտերը։ Նա էլ ուներ էր իւր ուրախ օրերը, բախտը նրան էլ մի ժամանակ ցոյց էր տուել իւր խաբուսիկ ժպիտը։ Բօսֆորի գեղեցիկ տեսարանները նրա յիշողութեան մէջ պատկերացրին Եփրատի (Մուրատ գետի) գեղեցիկ ափերը և Մուշի դաշտը իւր լայնածաւալ կանաչազարդութեամբ։ Նա մտաբերեց այն երջանիկ օրերը, երբ ինքը դեռ մանուկ հերկավար էր, ա֊բածացնում էր իւր հօր գութանի գոմէշները այդ գետի ա֊փերի մօտ։ Կէսօրուայ հանգստի ժամանակ նա գոմէշները քշում էր գետի մէջ, լուանում էր սառն ջրով և պաուկեց֊նում էր ալիքների մէջ։ Ջրասէր անասուններն թաւալվում էին իրանց զով անկողնում և հանդարտ կերպով որճում էին։ Իսկ ինքը, նստած գետեզերքի թփերի ներքոյ, զլում էր իւր սրինգը։ Նա այդ ժամուն մի առանձին ոգևորու֊թեամբ էր ածում, որովհետև գիտէր, որ մի սիրելի ականջ լսում էր նրան։ Ահա չքնաղ աղջկիկների հանդուն խումբը մօտեցաւ գետեզերքին։ Նրանք առաւօտից սկսեալ ափերի մօտ սունկ և այլ բանջարներ էին քաղում։ Լսելով Օհանի սրնգի ձայնը, նրանք ևս եղանակեցին իրանց ուրախ պար֊երգը։ Մէկի ձայնը աւելի քաղցր և աւելի ախորժ է հնչում։ Օհանը աւելի ոգևորվում է։ Նա գուրս է գալիս թփերի միջից, և մի աղջիկ իւր քաղած ծաղիկները բաժանում է նրա հետ։

Այդ անցած, մոռացուած չքնաղութիւնները դուրս կո֊չեցին Օհանի սրտից երկու „ախ“, երկու բառերի հետ։

„Ա՜խ վա թա ն (Հայրենիք), ա՛խ Գոհա՛ . . . բա֊ցականչեց նա և արտասուքը խեղդեց նրա ձայնը։

Երկար մի քարացած դրութեան մէջ նստած էր նա, մինչև յոգնածութիւնը առեց իւր պահանջը. գլուխը ակա֊մայ կերպով թեքուեցաւ կծոցի վրայ, աչքերը փակուեցան և քունը տարաւ։

Բաւական ժամանակ քնած էր նա, մինչև արևը սկսեց խոնարհուել դէպի իւր երկրային մուտքը։ Նրա քունը խո֊բին էր և անդորը։ Միայն երբեմն սեղմուած շրթունքների միջից դուրս էին հնչում նոյն երկու բառերը երկու „ախե֊րի“ հետ։

Եղանակը սկսեց փոխուիլ։ Երեկոյեան զով քամին հետ֊զհետէ սաստկանում էր, և ծովի ալիքները աւելի խոշոր կոհակներով զարկվում էին ափերին, այնքան մօտ, որ վտքը էր մնում, որ խլեն, տանեն Օհանին դէպի խորին յատակը։ Աղջիկ աղբանոցի ընդարձակ տարածութեան վրայ պտոյտ֊վում էր քամին և աւազախառն փոշին՝ թանձր վերմակի նման՝ սփռում էր Օհանի վրայ։ Մակոյկները սկսեցին շտա֊պել դէպի ափերը։ Ամեն ինչ գուշակում էր սաստիկ մրրիկ։ Բօսֆորը, մի ահագին կաթսայի նման, եփ էր գալիս, տակնուս֊վայ էր լինում։ Կատաղի ալիքները մռնչում էին և շրջա֊հայքը դղրդեցնում էին խլացուցիչ ձայնով։ Բայց այդ ձայ֊նները անկօր էին խանգարելու վաստակաբեկ մշակի խորին քունը . . .

Այդ միջոցին քաղաքի „պալիեկարնայներից“ մէկը եր֊գելով անցնում էր ծովեզերքից։ Դա մի յոյն սրնգիայ էր, այն դատարկաշրջիկներից մէկը, որոնք ցերեկով թափառվում են այսպիսի խուլ տեղերում, իսկ գիշերը, գանակը ձեռքում, յարձակվում են մենաւոր անցորդի վրայ։ Սրնգիայի սրատես աչքերից չը վրիպեցաւ քնած Օհանը։ Նա խնդոյն կշռեց իւր որսը և ուշիկ քայլերով մօտեցաւ նրան։ Մի քանի րոպէ հանգնած, ուշադրութեամբ նայում էր քնողի վրայ։ Ցետոյ աչք ածեց իւր շուրջը և նստեց Օհանի մօտ։ Զգուշութեամբ ձեռքը տարաւ նրա գրպանները, դուրս քերեց մի կոթը կոտ֊րած դանակ և մի կտոր չոր հաց։ Վերջինը Օհանի ընթրիքն էր։ Երկուսն էլ սրիկայի համար անպէտք բաներ էին, նե֊տեց գէպի մի կողմ։ Ցետոյ սկսեց որոնել նրա ծոցերը։ Ցոգ֊նած Օհանի քունը այն աստիճան ծանր էր, որ ամենևին չէր զգում, թէ ինչ է կատարվում իւր հետ։ Ծոցերից ոչինչ չը դուրս եկաւ, բացի մի քանի փալատի կտորտանքից, որ Օհանը այնօր հաւաքել էր փողոցներից, հարկաւորած ժա֊մանակ իւր մաշուած հագուստը կարկատելու համար։ Սրիկան այդ ցնցոտիները զզուանքով ձգեց դէպի ծովը։ Նրա աչքը ընկաւ մի Թելի վրայ, որ շապկի տակից անց էր կաց֊րած մերկ պարանոցով և երևում էր կիսաբաց օձիքից։ Թելի ծայրերը կորչում էին գոտիից ներքև։ „Գտայ“,—ասաց իւր մտքում սրիկան և աչքերը վառուեցան վայրենի ուրախու֊թեամբ։ Նա անզգալի կերպով բացաբերեց մաշկեղէն գոտին և սկսեց կամաց֊կամաց դուրս քաշել Թելը։ Նրա ծայրին կա֊պած էր մի կաւեայ քսակ. այդ էր սրիկայի խնդրածը։ Նա իւր դանակով կտրեց քսակը, վերկացաւ, և անխռով կերպով սկսեց հեռանալ։

Արևը արդէն մայր էր մտել և ամայի ծովեզերքը հետ֊զհետէ ընկղմվում էր երեկոյեան մթութեան մէջ։ Քամին դեռ չէր հանդարտուել, աղբանոցի մթերքները վեր էր բարձրացնում և թանձր սիւնակներով գալարում էր օդի մէջ։ Բօսֆորը ծփում էր խուլ որոտալից մռնչիւնով։ Օհանը տա֊կաւին քնած էր։ Ցոգնած անդամներից քունը շուտ չէ հե֊ռանում։

Այդ միջոցին մի չամեցած չօփչի կծոցը ուսին մտեր֊նում էր աղբանոցին։ Նա դիմեց ուղիղ այն կողմը, որտեղ պառկած էր Օհանը։ Մթութեան մէջ չը նկատելով իւր ար֊հեստակցին, վերևից կծոցը շուռ տուեց նրա վրայ։ Որպէս մի կայծակնահար, շփոթուած կերպով վերթռաւ Օհանը։ Նա դեռ չէր թօթափել իւր մարմնից ապականութիւնը, նա դեռ չը գիտէր իւր հետ պատահածը,—այդ խռովութեան մէջ մտաբերեց երկու բան միայն՝ սրինգը խոստացած երկու ղուրսը և իւր քսակը։ Նա ձեռքը տարաւ ծոցը, տեսաւ, որ վերջինը իւր տեղում չէր։—„Վա՛յ, քսակը“ . . . գոչեց նա և երկաթեայ մատներով պինդ բռնեց մի ս չօփչիի օձիքից։

—Ռուսկս, աւազակ, եթէ ոչ, ծովը կը նետեմ քեզ,—կատաղութեամբ սպառնում էր նրան։

Երկուղը և չանկարծակի յարձակումը բոլորովին սար֊սափեցրին խեղճ մշակին, որ իւր անզգուշութեամբ մի այդ֊պիսի փորձանքի մէջ ընկաւ։ Նրա լեզուն կապուեցաւ, ոչինչ պատասխանել չը կարողացաւ։ Միւս կողմից, նրան տիրեց անհաւատութիւնը, մտածելով, թէ իւր օձիքից բռնող սա֊տանան, պէտք է անպատճառ չար ոգիներից մէկը լինի, որ այդպիսի ամայի տեղերում են բնակվում։ „Ցիսուս . . . Քրիստոս . . . սուրբ Խաչ . . . սուրբ Աստուածած“ . . . մըր֊մըրաց նա և, երեսը խաչակնքելով, օձիքը թափ տուեց և, իւր Թերմաշ հագուստի մի մասը Թողնելով Օհանի ձեռ֊քում, ինքը փախաւ, անյայտացաւ երեկոյեան խաւարի մէջ։

Օհանը մնաց բոլորովին շուարած, վերին աստիճան կատաղութեան մէջ։ Նա հարիւր անգամ ձեռքը տարաւ դէ֊պի ծոցը, բայց քսակը այնտեղ չէր։ Նրա յուսահատութիւնը չափ չունէր. նա կորցրել էր իւր ամբողջ գանձը, իւր ամբողջ հարստութիւնը։ Հարիւր ղուրուշ չափ փարա կար այն քսակի մէջ։ Այդ իւր մի տարուայ վաստակն էր, որի համար այնքան քրտինք էր թափել, այնքան տանջուել էր։ Բոլորը մի ակնթար֊թից կորաւ։ Ի՞նչ անէր խեղճը։ Դժուածի նման սկսեց այս֊կողմ և այնկողմ ընկնել, և որնէ դողին։ Այդ միջոցին նրա

ոտքը դիպաւ փախստական չօփչիի կԹոցին, որ ժամանակ չունեցաւ իւր Հետ տանելու։ Իւր բոլոր բարկութիւնը Թափեց այդ անմեղ առարկայի վրայ։ Ձգեց Նրան իւր ոտների տակ և ջարդուփշուր արեց։

Նա վոքը լինչ Հանգստացաւ։ Օհանի նման մարդիկ շատ անգամ ամենահասարակ առիթներ են գտնում իրանց մխիթարելու։ Նա իւր վրէժը առաւ իւր գողի կԹոցից։ Այդ կԹոցից եղբակացրեց, որ իւր գողը պէտք է չօփչի լինէր։ Իսկ չօփչիին իւր կԹոցից զրկելը՝ մեծ Հարուածք էր նրա Համար։ Բացի դրանից, նրա ձախ աչքի վերնակոպը քանի օր էր, որ խաղում էր։ Օհանը մէշա սպասում էր մի ձախողակի դէպք, և ահա կատարուեցաւ։

Օհանը Հաշտուեցաւ Նախախնամութեան տնօրէնութեան Հետ։

Նա կրկին յիշեց տիկնոջ խոստումնքը։

„Այդ երկու զուռուշը գոնէ չը կորցնեմ“ . . . մտածեց նա, և շտապով Հեռացաւ ծովեզերքից։

Ր Ա Ֆ Ֆ Ի

(Կը շարունակուի)։

Խմբագիր-Հրատարակիչ ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ատենապետ պ. Եսայի Փիլոյեանը պատիւ ունի խնդրել այն պարոններից որոնք ինքնուրոյն կամ թարգմանական պատրաստի թատրոնական պիէսաներ ունին՝ բարեհաճելու այդ գրուածքները՝ իւրեանց պայմաններով հանդերձ՝ ուղարկել նրան հետևեալ հասցէով. Նագորնայեա փողոց, սեփական, տուն։

(2—3)

«ՌՍՇՏԻ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ» խոնարհաբար խնդրում է պ. պ. խմբագիրներից, հեղինակներից, թարգմանիչներից և մի քանի անհատներից, նպաստել Ռաշտ քաղաքի գրատան աճմանը, և հետևապէս Պարսկահայերի զարգացմանը, իւրեանց ունեցած գրքերով։ Յանկացողները Հայերէն, Ռուսերէն և Ֆրանսերէն լեզուով գրքեր կարող են ուղարկել Բագու՝ հետևեալ հասցէով. Баку Г-ну Григорію Дильдарову.

(Պարսկաստանի Ռաշտ քաղաքի գրատան համար)

ՎԻՔՏՕՐ ՀԻՒԳՕ

ԿԼՕՊ ԳԵՕ

Թարգ. Ա. ԱԲԵԼԵԱՆՑԻ

Գինն է 20 կոպ.

Վաճառվում է. Թիֆլիսում՝ կենտրոնական գրավաճառանոցում և Բագուում թարգմանողի մօտ. Баку Александру Абелянцъ.

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

«ԿՈՂՈՊՏՈՒԱԾ ԵԿԵՂԵՑԻ»

ԵՂԵՐԱԿԱՆ ՎԷՊ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԼՈՒՄԱՑԻ (Ս. Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ)։

ԳԻՆՆ Է ՄԻԿ ՐՈՒԲԼ

Թիֆլիսում վաճառվում է միայն կենտրոնական գրավաճառանոցում։ Օտարաքաղաքացիք ուղղակի դիմում են այս հասցէով՝ въ г. Тифлисъ, въ Типографію канцеляріи Главноначальствующаго, Сергѣю Симоновичу Назарову.

(3—5)

ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Ստացուել են հետևեալ հայերէն նոր հրատարակութիւնները

	Ր. Կ.
Ընդհանուր գրքեր	
1. Աբփիաբեան՝ Նորավէպք—դատապարտեալը, երա-կի մը գինը, կատակ մը.	— 50
2. Ապու-շը	— 40
3. Կոստանեանց՝ Հայոց վանքերը (Համառ. տեսու Թ.)	— 50
4. Տէր-Աղէքսանդրեան՝ Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը	1 50
5. Փառնակէս՝ Գրականական երեկոյ կատակերգութ.	— 20
6. Շուշանիկ Շամքորեան, Լուսանման, Հին զրոյց .	— 40
7. Արքեցողն մահը (դիմկինսից).	— 5
8. Աւետարիւս՝ Փիտեօփ գիւղացին, Նորմանդական Հին զրոյց	— 30
9. Գրիգոր Լուսաւորիչը և իւր որդիքը	— 15
10. Հայ գիւղացու Հին մը	— 25
11. Հայ գիւղացի	— 10
12. Պերպէրեան՝ գրամ, տնտեսագիտ. բանախօսութիւն	— 35
Դաստգրքեր	
1. Ն. Սիմոնեանց՝ Ընդհանուր աշխարհագրութիւն, երկրորդ տարի, երկրորդ տիպ, ...	
2. „ Մասն ուսումնական և քնական, պատկերներով և քարտեզով	— 60
„ Ընդհանուր աշխարհագրութիւն, երրորդ տարի, մասն քաղաքական, երկ. տիպ	— 60
3. Տէր Ղևոնդեան՝ Մայրենի լեզու, ա. տարի, տասնևմէկերորդ տիպ, բարեփոխած, Հոխացրած և պատկերազարդ	— 35
4. „ Մայրենի լեզու, երկրորդ տարի, ուԹերորդ տիպ, բարեփոխած և Հոխացրած նոր բանորոց յօդուածներով	— 40
5. „ Մայրենի լեզու, երրորդ տ. Հինգ. տ.	— 45
6. Ս. Մանգինեան՝ Ընտանեկան աշխարհ, ժողովրդական բանաստեղծութեան Հատուածներով և Այբբենար. երկրորդ տիպ	— 25
7. Տէր-Սահակեանց՝ Սկզբունք Քրիստոնէական Հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ, չորրորդ բարեփոխեալ տպագրութիւն	— 50

Դաստգրքերից գումարով գնողները 20% զեղչ ունին։ Ընթերցանութեան գրքերի համար ճանապարհածախք պէտք է ուղարկել մանեթին 15 կոպ.

Дозв. Ценз. Тифлисъ, 9 Августа 1886 г.
Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1/2.